Հուլիս, 2025

Թեստ տարրական աստիճանի ուսուցիչների համար

Մաթեմատիկա

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ մասնագիտական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է՝ 53

Թեստում ներկայացված առաջադրանքները, ձևաչափի տեսակետից տարատեսակ են: Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք կամ գրեք պատասխանը:

Ի նկատի ունեցեք.

- Եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ կնշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր ձեռք չեք բերի:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

Առարկայական գիտելիք

(1) **1.** Ավտոբուսում մի քանի ուղևոր էր: Առաջին կանգառից հետո ուղևորների թիվը կրկնապատկվեց, երկրորդ կանգառից հետո՝ պակասեց 8-ով, երրորդ կանգառից հետո՝ կրկին կրկնապատկվեց, իսկ չորրորդ կանգառից հետո՝ կրկին պակասեց 8-ով: Դրանից հետո ավտոբուսում ուղևոր չմնաց: Քանի՞ ուղևոր էր ավտոբուսում ի սկզբանե:

ա) 5

բ) 6

գ) 7

դ) 8

(1) **2.** Դիցուք A նշանակում է 18-ի բաժանարարների բազմությունը, B 36-ի բաժանարարների բազմությունը, իսկ $A \cup B$ այս բազմությունների միավորումը: Քանի՞ անդամից է բաղկացած $A \cup B$:

ա) 15

բ) 13

գ) 11

դ) 9

(1) **3.** B կետը $A(3;\ -4)$ կետի համաչափությունն է y առանցքի նկատմամբ, իսկ C կետը B կետի համաչափությունն է x առանցքի նկատմամբ: Ինչի՞ է հավասար C կետի կոորդինատների գումարը:

ա) (-2)-ի,

բ) (-1)-ի,

գ) 2-ի,

դ) 1-ի:

(1) **4.** a այնպիսի բնական թիվ է, որը 6-ի բազմապատիկն է, իսկ b այնպիսի զույգ բնական թիվ է, որը 3-ի բազմապատիկը <u>չէ:</u> Թվարկածներից ո՞ր արտահայտության արժեքն է 6-ի բազմապատիկը:

ա) $4(a+b)+3(2a+b)$

բ) $3(2a+b)+4(a+3b)$

գ) $(2a+3b)+2(3a+2b)$

դ) $6(3a+b)+7(2a+b)$

(1) **5.** Եթե a մեծ է b-ից 3-անգամ, ապա $(5a - 7b)$ մեծ է $(2a - b)$-ից.

ա) 1,2-անգամ,

բ) 1,4-անգամ,

գ) 1,6-անգամ,

դ) 1,8-անգամ:

(1) **6.** Խորանարդի մակերևույթի մակերեսն է 24 սմ^2: Այս խորանարդի ծավալն է.

ա) 8 սմ^3,

բ) 12 սմ^3,

գ) 48 սմ^3,

դ) 64 սմ^3:

(1) **7.** Թվային առանցքի վրա a և b թվերի համապատասխան կետերի միջև հեռավորությունը հավասար է 2 միավորի, իսկ b և c թվերի համապատասխան կետերի միջև հեռավորությունը հավասար է 4 միավորի: Ստորև թվարկածներից որի՞ն հավասար **չի կարող** լինել $a - c$:

ա) (-6)-ի,

բ) (-4)-ի,

գ) (-2)-ի,

դ) 2-ի:

(1) **8.** Ավտոբուսում 40 զբոսաշրջիկներ են, որոնց 80%-ը խոսում է անգլերեն, իսկ 55% –ը՝ ֆրանսերեն: Թվարկածներից որի՞ն կարող է հավասար լինել այն զբոսաշրջիկների թվաքանակը, որոնք խոսում են և՛ անգլերեն և՛ ֆրանսերեն:

ա) 12

բ) 16

գ) 24

դ) 28

Տվյալների վերլուծում

Դիագրամի վրա տրված է, թե ինչ քանակի ջուր էր ներհոսում ջրամբարում և ինչ քանակի ջուր էր մատակարարվում սպառողներին այս ջրամբարից ամենօրյա, մայիսի 12-ից մայիսի 18-ը ներառյալ:



Հաջորդ երկու հարցերին պատասխանեք այս դիագրամի համաձայն:

Անցում հարցերին. 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **9.** Քանի՞ հազար մ^3-ով էր գերազանցում սպառողների համար մայիսի 16-ից մինչև մայիսի 18-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանում մատակարարված ջրի քանակը՝ մայիսի 12-ից մինչև մայիսի 14-ը ընկած ժամանակաշրջանում մատակարարված ջրի քանակին:

ա) 2

բ) 4

գ) 6

դ) 8

Տեսնել դիագրամը

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **10.** Քանի՞ հազար մ^3 ջուր կար ջրամբարում մայիսի 17-ի օրվա վերջին, եթե մայիսի 15-ի օրվա վերջին ջրի քանակը հավասար էր 18 հազար մ^3-ին:

ա) 14

բ) 16

գ) 20

դ) 22

Տեսնել դիագրամը

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **11.** ABC եռանկյան մեջ $|AB| = |BC|$, $|AC| < |AB|$: Թվարկածներից որի՞ն կարող են հավասար լինել այս եռանկյան անկյունների մեծությունները:

ա) $30°$, $60°$, $90°$

բ) $75°$, $60°$, $75°$

գ) $50°$, $50°$, $80°$

դ) $70°$, $70°$, $40°$

(1) **12.** Ունենք միայն մեկական 3, 5, 7-կիլոգրամանոց կշռաքարեր: Ստորև թվարկածներից քանի՞ կիլոգրամանոց առարկա կշռել **չենք կարողանա** նժարներով կշեռքի վրա միայն այս կշռաքարերը կիրառելով:

ա) 1

բ) 2

գ) 6

դ) 9

(1) **13.** Սանդրոն, Նիկան, Գիորգին և Վաժան եղբայրներ են:

Տրված է երկու դրույթ.

I. Եղբայրներից գոնե մեկը ծնվել է ապրիլին:
II. Եղբայրներից գոնե մեկը չի ծնվել ապրիլին:

Ստորև թվարկածներից ո՞րն է ***<u>անհնար:</u>***

ա) Երկու դրույթներն էլ կեղծ են,
բ) երկու դրույթներն էլ ճշմարիտ են,
գ) առաջին դրույթը կեղծ է, իսկ երկրորդը՝ ճշմարիտ,
դ) առաջին դրույթը ճշմարիտ է, իսկ երկրորդը՝ կեղծ:

(1) **14.** Տրված երեք թվերից առաջին թիվը հավասար է երկրորդ թվի $\frac{1}{2}$ մասին, իսկ երկրորդ թիվը՝ երրորդ թվի $\frac{1}{4}$ մասին: Այս թվերի գումարի ո՞ր մասն է կազմում երրորդ թիվը:

ա) $\frac{8}{11}$

բ) $\frac{11}{14}$

գ) $\frac{4}{7}$

դ) $\frac{5}{8}$

(1) **15.** Հանքախորշից հանքանյութը միատեսակ մեքենաներով են տեղափոխում: Յուրաքանչյուր մեքենան ժամանակի հավասար միջակայքերում հավասար քանակի հանքանյութ է դուրս բերում: 4 մեքենայով 4 ժամում հանքախորշից 400 տոննա հանքանյութ դուրս բերեցին: Քանի՞ մեքենա է հարկավոր 6 ժամում 600 տոննա հանքանյութ տեղափոխելու համար:

ա) 3

բ) 4

գ) 5

դ) 6

(1) **16.** Տրված է պրիզմա և բուրգ: Պրիզմայի նիստերի քանակը 2-անգամ ավելի է բուրգի գագաթների քանակից: Քանի՞ անգամ ավելի է պրիզմայի կողերի քանակը բուրգի կողերի քանակից:

ա) 2-անգամ,

բ) 2,5-անգամ,

գ) 3-անգամ,

դ) 3,5-անգամ:

(1) **17.** Տրակտորիստը առաջին օրը հերկեց դաշտի կեսը, երկրորդ օրը՝ դաշտի մեկ երրորդը, իսկ երրորդ օրը՝ մնացած 5 հեկտարը: Թվարկածներից ո՞ր արտահայտությունն է ցույց տալիս, թե քանի՞ հեկտար էր դաշտի մակերեսը:

ա) $\frac{1}{2}+\frac{1}{3}+5$

բ) $5+1:\left(\frac{1}{2}+\frac{1}{3}\right)$

գ) $5+1:\left(\frac{1}{2}-\frac{1}{3}\right)$

դ) $5:\left(1-\frac{1}{2}-\frac{1}{3}\right)$

(1) **18.** m և n բնական թվեր են: Տրված է 3 անհավասարում.

(1) $\frac{1}{n} > \frac{1}{m} - \frac{1}{10}$, (2) $\frac{1}{n} > \frac{1}{m} + \frac{1}{10}$, (3) $m > n$:

Թվարկածներից ո՞րն է արդարացված:

ա) Եթե (3), ապա (1),

բ) եթե (3), ապա (2),

գ) եթե (1), ապա (2),

դ) եթե (1), ապա (3):

(1) **19.** *A* և *B* բնակավայրերը միմյանց հետ կապված են ուղղագիծ ճանապարհով: Այդ ճանապարհի վրա գտնվող *C* բնակավայրից միաժամանակ մեկնարկեցին երկու ավտոմեքենաներ, որոնցից առաջինը համաչափ արագությամբ տեղաշարժվեց մինչև *A* բնակավայր, երկրորդը՝ մինչև *B* բնակավայրը: Դիագրամի վրա տրված է, թե ինչպես էր փոփոխվում ավտոմեքենաների միջև հեռավորությունը շարժումը սկսվելուց անցած ժամանակի ընթացքում:



Ինչի՞ է հավասար ավելի արագ տեղաշարժվող ավտոմեքենայի արագությունը:

ա) 50 կմ/ժ-ի,

բ) 55 կմ/ժ-ի,

գ) 60 կմ/ժ-ի,

դ) 65 կմ/ժ-ի:

Տվյալների բավարարում

(1) **20.** x թիվը հավասար չէ ո՛չ 0-ի և ո՛չ էլ (-2)-ի:

Տրված է երկու պայման.

I. $x > 1$.

II. $x < 2$.

Պարզելու համար, թե ո՞րն է մեծ՝ $\frac{1}{x}$, թե $\frac{1}{x+2}$.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **21.** Ուղղանկյունաձև հողակտորի երկարությունը 200 մ-ով ավելի է իր լայնությունից:

Տրված է երկու պայման.

I. Շալվան միևնույն արագությամբ տեղաշարժվելիս՝ այդ հողակտորի երկարությունն անցնելուն հատկացրեց 9 րոպե, իսկ լայնությունն անցնելուն՝ 6 րոպե:

II. Սանդրոն միևնույն արագությամբ տեղաշարժվելիս՝ այդ հողակտորի երկարությունն անցնելուն, լայնության համեմատությամբ, 1,5-անգամ ավելի ժամանակ հատկացրեց:

Պարզելու համար, թե ինչի՞ է հավասար հողակտորի մակերեսը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,
բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,
գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,
դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,
ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **22.** Շրջանային դիագրամի վրա նշված է, թե երկիր մուտք գործելիս զբոսաշրջիկների քանի՞ տոկոսը օգտվեց երկաթգծից և քանի՞սը՝ օդային տրանսպորտից:



Տրված է երկու պայման.

I. Այն զբոսաշրջիկների թվաքանակը, ովքեր երկիր մուտք գործելիս օգտվեցին ավտոտրանսպորտից, 3-անգամ գերազանցում է այն զբոսաշրջիկների թվաքանակին, ովքեր երկիր մուտք գործելիս օգտվեցին օդային տրանսպորտից:

II. Այն զբոսաշրջիկների թվաքանակը, ովքեր երկիր մուտք գործելիս օգտվեցին ավտոտրանսպորտից, 650 հազարով գերազանցում էր այն զբոսաշրջիկների թվաքանակին, ովքեր երկիր մուտք գործելիս օգտվեցին օդային տրանսպորտից:

Պարզելու համար, թե երկիր մուտք գործելիս՝ քանի զբոսաշրջիկ օգտվեց երկաթգծից:

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **23.** Տրված է **հավասարասրուն** եռանկյուն և դրա մասին երկու պայման.

I. Եռանկյան մի կողմի երկարությունը երկրորդ կողմի երկարությունից 6 սմ-ով ավելի է,
II. Եռանկյան պարագիծը հավասար է 30 սմ-ի:

Պարզելու համար, թե ինչի՞ են հավասար եռանկյան կողմերի երկարությունները.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,
բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,
գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,
դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,
ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **24.** m հավասար է չորս պարզ թվերի արտադրյալին:

Տրված է երկու պայման.

I. m-ը առանց մնացորդի բաժանվում է 12-ի:

II. m -ը առանց մնացորդի բաժանվում է 15-ի:

Պարզելու համար, թե ինչի՞ է հավասար m -ը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(3) **25.** Արտադրամասի ղեկավարը իր առաջին, երկրորդ և երրորդ տեղակալներին բաժանեց պարգևավճար, համապատասխանաբար 10: 7: 3 հարաբերությամբ: Եթե նա նույն պարգևավճարը իր տեղակալներին համապատասխանաբար 5: 3: 2 հարաբերությամբ բաշխեր, ապա տեղակալներից մեկին 500 լարիով ավելի կհասներ: Ընդամենը քանի՞ լարի էր պարգևավճարի գումարը:

Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **26.** Ուղղանկյուն կոորդինատային հարթության վրա տրված ABE և CDE եռանկյունների A, B, C և D գագաթների կոորդինատները ամբողջ թվեր են, իսկ E գագաթի կոորդինատները (3,4; 1,2) (տես՝ գծագիրը): Քանի՞ անգամ փոքր է ABE եռանկյան մակերեսը CDE եռանկյան մակերեսից:



Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **27.** Հացահատիկը տեղափոխելու համար բաշխեցին մի քանի կապույտ և մի քանի կանաչ բեռնամփոփներում (կոնտեյներներում): Հացահատիկի կեսը կապույտ բեռնամփոփում բաշխելուց հետո յուրաքանչյուր կապույտ բեռնամփոփում հայտնվեց 6 տոննա հացահատիկ, իսկ մնացած կեսը կանաչ բեռնամփոփում բաշխելուց հետո յուրաքանչյուր կանաչ բեռնամփոփում՝ 4 տոննա: Քանի՞ տոննա հացահատիկ կհայտնվեր յուրաքանչյուր բեռնամփոփում, եթե տեղափոխելու համար նախատեսված հացահատիկը այս բեռնամփոփներում հավասարաչափ բաշխեին:

Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **28.** Զբոսաշրջային խմբում միայն չինացի և կորեացի զբոսաշրջիկներ են, ընդամենը՝ 12 զբոսաշրջիկ: Չինացի զբոսաշրջիկների միջին տարիքը 48 տարեկանից ավելի է, կորեացիներինը՝ 21 տարեկանից ավելի է, իսկ բոլոր զբոսաշրջիկների միջին տարիքը 32 տարեկանից փոքր է: Այս զբոսաշրջիկներից **առնվազն** քանիսն է կորեացի:

Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **29.** Աշակերտներին առաջարկեցին հետևյալ աշխատանքը.

1) Հաշվարկեք. I. $68 + 21 + 9$ II. $94 - 27 - 7$

2) Տասնորդական կոտորակի կիրառմամբ՝ գրառեք.

I. Քանի՞ սանտիմետր է 3 սմ և 7 մմ,

II. Քանի՞ տոննա է 5 տ և 30 կգ,

III. Քանի՞ դոպե է 4 դոպեն և 12 վրկ.:

3) Մայրը կոնֆետների քանակի կեսը, ավելացրած ևս մեկ կոնֆետ տվեց Աննային, իսկ մնացած 7 կոնֆետը՝ Սալոմեին: Ընդամենը քանի՞ կոնֆետ ուներ մայրը:

4) Լողավազանին միացված է երկու խողովակ: Առաջին խողովակով դատարկ լողավազանը լցվում է 6 ժամում, իսկ երկրորդ խողովակով լցված լողավազանը դատարկվում է 2 ժամում: Քանի՞ ժամում կդատարկվի լցված լողավազանը, եթե երկու խողովակները միաժամանակ բացենք:

5) Ուղղանկյունը բաժանված է 4 քառակուսիների այնպես, ինչպես դա տրված է գծագրի վրա: Բաժանման արդյունքում ստացած յուրաքանչյուր փոքր քառակուսու պարագիծը 8 սմ է: Ինչի՞ է հավասար ամբողջական ուղղանկյան պարագիծը:



Հաջորդ էջին տրված է աշակերտներից մեկի աշխատանքը.

1) I. $68 + 21 + 9 = 68 + (21 + 9) = 68 + 30 = 98$

II. $94 - 27 - 7 = 94 - (27 - 7) = 94 - 20 = 74$

2) I. 3,7 սմ II. 5,30 տ III. 4,12 րոպե

3) Մայրն ուներ $2 \cdot (7 - 1) = 12$ կոնֆետ:

4) 6 ժամում առաջին խողովակով դատարկ լողավազանը լցվում է մեկ անգամ, իսկ երկրորդ խողովակով լցված լողավազանը դատարկվում է՝ 3-անգամ: Այդ պատճառով երկու խողովակներն էլ բացելու դեպքում լցված լողավազանը կդատարկվի $\frac{6}{3+1} = \frac{6}{4} = 1,5$ ժամում, այսինքն՝ 1 ժամ և 30 րոպեում:

5) $8 : 4 = 2$ սմ, երկարությունում 5 փոքր քառակուսի կտեղավորվի, լայնությունում՝ 2 փոքր քառակուսի, պարագիծն է $2 \cdot (5 + 2) = 14$ սմ:

- Մատնացույց արեք աշակերտի կողմից թույլ տրված յուրաքանչյուր սխալը և գրեք ուղղված տեսքով:

Ակադեմիական հմտություններ

Ընթերցած տեքստի վերաիմաստավորում

Ուշադրությամբ ընթերցե՛ք և իմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:

I Կրթության բնագավառում անհավասարությունը ենթադրում է այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն տարբեր խմբերի միջև կրթական կարողությունների, ռեսուրսների և, համապատասխանաբար արդյունքների առումով: Անհավասարությունը կարող է դրսևորվել տարբեր ուղղություններով, ինչը կախված է տնտեսական, սոցիալական, գենդերային, էթնիկական կամ այլ գործոններից: Օրինակ՝ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները հաճախ ավելի քիչ հնարավորություններ ունեն կրթության համար, դրանք են՝ լավ դպրոցներ, ուսուցիչներ, տեխնոլոգիաներ և լրացուցիչ կրթական ռեսուրսներ ստանալու հասանելիությունը: Այդ պատճառով նրանք կարող են դժվարանալ հաջողության հասնել: Նույնպես որոշ մշակույթներում աղջիկները կրթություն ստանալու սահմանափակ հնարավորություններ ունեն, ինչը պայմանավորում են հասարակության մեջ կանանց դերի վերաբերյալ պահպանողական սպասումները և կարծրատիպային համոզմունքները:

II Կրթական անհավասարությունը ուղղակիորեն կապված է մարդկային կապիտալի ցուցչի հետ: Այս վերջինը այն ցուցանիշն է, որն արտացոլում է երկրի բնակչության կրթության և առողջական վիճակի որակի գնահատականը: Եթե երկրի բնակչությունը ստանում է որակյալ կրթություն և առողջապահական ծառայություններ, ապա նրա «մարդկային կապիտալը» բարձր է, ինչը նշանակում է, որ այդ երկրի քաղաքացիներն ունեն լավ պայմաններ իրենց կարողությունները՝ ներուժը իրացնելու համար, ինչը, համապատասխանաբար, պայմանավորում է երկրի տնտեսության հզորությունը:

III Կա՛ համոզմունք, որ եթե բավականաչափ աշխատես, անպայման կհասնես քո բոլոր նպատակներին: Նվաճումը հմտությունների, մոտիվացիայի և քրտնաջան աշխատանքի արդյունք է, և համապատասխանաբար՝ անկախ է սոցիալական ծագումից: Սակայն ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաները հաճախ չեն կարողանում իրացնել իրենց կարողությունները անհավասար պայմանների պատճառով: Ցածր եկամուտ ունեցող ընտանիքները հաճախ չեն կարողանում մեծ ներդրում կատարել իրենց երեխաների կրթության մեջ, ինչը պայմանավորում է ցածրորակ կրթություն և, հետևաբար, աշխատաշուկայում այս աշակերտների ցածր հնարավորություններ: Սա ստեղծում է անհավասարություն, որը փակ շղթայի մեջ է դնում սոցիալ-տնտեսական առումով անապահով խմբերին, քանի որ նրանք բարձր կրթական մակարդակ ունենալու ավելի քիչ հավանականություն՝ շանս ունեն:

Անցնել հարցերին. 30 31 32 33 34

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

IV Կրթական անհավասարության խնդրով հետաքրքրված ֆրանսիացի հետազոտող Սեբաստիան Գուդոն ուշադրությունը կենտրոնացրեց մեկ այլ տեսակետի վրա։ Նրա հետազոտության արդյունքների համաձայն՝ անհավասարությունը սկսվում է վաղ տարիքից։ Սոցիալական խավը ազդեցություն է գործում այն բանի վրա, թե ինչ լուսա է ներդնում երեխան դասի ընթացքում, ինչպես նաև այն բանի վրա, թե ինչպես են երեխաները գնահատում իրենց անձը և ուրիշներին։ Պարզվել է, որ ցածր սոցիալական խավի ընտանիքների երեխաները ավելի քիչ են մասնակցում խմբային քննարկումներին, քան բարձր սոցիալական խավի իրենց հասակակիցները։ Կարևոր է, որ այս իրավիճակը չբացատրվի երեխաների միջև լեզվական կարողությունների կամ ինքնարտահայտման պակասով։ Այն նորմերը, որոնք ցածր սոցիալական խավի ընտանիքներում սովորական են, հակասում են այն նորմերին, որոնք տարածված են դպրոցում։ Նրանց ինքնարտահայտման ձևերը և մշակութային փորձառությունները թերագնահատվում են դասարանում։ Երեխաները համեմատում են իրենց անձը ուրիշների հետ, հայտնաբերում են տարբերություններ, տան և դպրոցի միջև մշակութային անհամապատասխանություններ և իրենց նկատմամբ բացասական սպասումներ, ինչը ուժեղացնում է ուրիշների կողմից քննադատվելու վախը և, հետևաբար, նրանք խուսափում են ինքնադրսևորումից։

V Կրթության վաղ շրջանում ստեղծված անհավասար ուսումնական միջավայրը կրթական ողջ կարիերայի ընթացքում առաջադիմության տարբերությունների նշանակալից հիմքերից մեկն են։

Անցնել հարցերին. 30 31 32 33 34

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **30.** Կրթության մեջ անհավասարության ո՞ր երկու պատճառներն են պատկերված առաջին պարբերությունում բերված օրինակներով։

ա) Տնտեսական և էթնիկական,
բ) էթնիկական և գենդերային,
գ) տնտեսական և գենդերային,
դ) սոցիալական և էթնիկական։

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **31.** Թվարկածներից ո՞րն է ճիշտ ներկայացնում կրթական անհավասարության և մարդկային կապիտալի ցուցչի միջև եղած կապը։

ա) Բարձր եկամուտ ունեցող երկրները միանշանակ ունեն հասանելի կրթություն և մարդկային կապիտալի բարձր ցուցիչ։

բ) Եթե երկիրն ունի մարդկային կապիտալի բարձր ցուցիչ, դա նշանակում է, որ այդ երկրում չկա որևէ մարդ, որը ստացել է ցածրորակ կրթություն։

գ) Մարդկանց ցածրորակ կրթությունը պայմանավորված է աղքատությամբ, չնայած հնարավոր է այդ պատճառը փոխհատուցել որակյալ առողջապահությամբ, հետևաբար, մարդկային կապիտալը չի տուժի։

դ) Եթե մարդիկ կրթություն ստանալիս ունեն տարբեր պայմաններ, նրանց կարողությունները պակաս զարգացած կլինեն, և, համապատասխանաբար, երկրում կտուժի մարդկային կապիտալը։

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **32.** Տեքստի երրորդ պարբերությունում կարդում ենք. «Նվաճումը հմտությունների, մոտիվացիայի և քրտնաջան աշխատանքի արդյունք է»: Թվարկածներից ո՞րն է **կասկածի տակ դնում** այդ կարծիքը:

ա) Այն աշակերտները, ովքեր սիստեմատիկաբար բացակայում են դպրոցից, չեն կարողանում հասնել ակադեմիական հաջողությունների:

բ) Աշակերտների մեծ մասը, ում մայրենի լեզուն չի համընկնում դպրոցում ուսուցման լեզվին, չունեն բարձր ակադեմիական առաջադիմություն:

գ) Աշակերտները, ովքեր չունեն համակարգված կերպով առաջադրանքները կատարելու սովորություն, չեն կարողանում հասնել ակադեմիական հաջողությունների:

դ) Աշակերտների մեծ մասը, ովքեր չունեն համբերատար լինելու պատշաճ զարգացած ունակություն, չեն հասնում ակադեմիական հաջողությունների:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **33.** Թվարկածներից ո՞րն է տեքստի չորրորդ պարբերությունում նկարագրված հետազոտության արդյունքների վրա հիմնված արդարացի եզրակացությունը:

ա) Սեփական տարբերակվածության ընկալումը և ուսումնական միջավայրում աջակցության պակասը բացասաբար են անդրադառնում երեխաների ինքնագնահատման վրա, ինչը պատնեշ է հանդիսանում նրանց կարողության իրացման համար:

բ) Երեխաների լեզվական կարողությունների և ինքնարտահայտման հմտությունների համաձայն՝ երեխաների միջև գոյություն ունեցող տարբերությունները պայմանավորում են նրանց ներգրավվածությունը ուսումնական ակտիվություններում, ինչը, համապատասխանաբար պատնեշ է ստեղծում կրթության հասանելիության համար:

գ) Երեխաների միջև տարբերությունները սոցիալական դասի համաձայն բացատրվում է նրանց մշակութային փորձառությունների տարբերություններով, ինչը անհավասար ուսումնական միջավայր է ստեղծում:

դ) Ուսումնական միջավայրին հարմարվելու համար երեխաների ինքնագնահատումը չի կարող պատնեշ լինել: Անհավասար կրթական միջավայրը դպրոցում բոլոր երեխաների համար ստեղծում է միատեսակ նորմեր:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(1) **34.** Թվարկածներից ո՞րը **չի հանդիսանում** տվյալ տեքստի նպատակը:

ա) Մեզ ծանոթացնել կրթական անհավասարության տարբեր պատճառներին:

բ) Ընդգծել կրթության մեջ անհավասարության և երկրի տնտեսական հզորության միջև կապի կարևորությունը:

գ) Բացատրել, թե ինչպե՞ս և ի՞նչ ձևով է այս կամ այն գործոնը ազդում կրթական անհավասարության վրա:

դ) Ժամանակակից հետազոտությունների արդյունքների հիման վրա ցույց տալ կրթական անհավասարությունը վերացնելու ուղիները:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35

(9) **35. Վերլուծական էսսե**

Ուշադրությամբ ծանոթացե՛ք առաջադրանքում տրված երկու փոխհակասական դրույթներին: Ընտրությունը կատարե՛ք դրանցից մեկի օգտին: Բերե՛ք փաստարկներ ձեր ընտրությունը հիմնավորելու համար և քննադատորեն գնահատե՛ք հակասական դրույթը:

ա) Երեխային դպրոցում ավելի շատ ազատություն և ինքնավարություն պետք է տանք, որպեսզի զարգանա անկախ և բարձր քաղաքացիական պատասխանատվություն ունեցող անձնավորություն:

բ) Դպրոցում երեխայի ազատության որակը խստորեն պետք է վերահսկվի, որովհետև նա լրիվությամբ չի կարողանում ըմբռնել սեփական գործողությունների հետևանքները և դրանով վնաս է հասցնում և՛ իրեն և՛ ուրիշներին:

Գրվածքը պետք է պարունակի առնվազն 120 բառ: